

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Աստղիկ Սողոյան

*Բանասիրական գիտությունների թեկնածու
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ*

Երևանի պետական համալսարան

ORCID ID: 0000-0002-0976-9954

Astghik.soghoyan1994@gmail.com

DOI: 10.54503/1829-0116-2025.2-35

ՄԻՋՏԵՔՍՏԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԿԱՐՅԱՆԻ «ԳԱՂՏՆԻՔ ՄԻՐԱՀԱՐԱՑ ԿԱՄ ԱՐԱՐԱՏԱՅ ԱՅՅԵԼՈՒՆ» ՎԵՊՈՒՄ*

Բանալի բառեր – Համբարձում Կարյան, միջտեքստայնություն, պարատեքստ, հիպերտեքստ, հիպոտեքստ, Մովսես Խորենացի:

Հոդվածը նվիրված է արևմտահայ գրականության մոռացված էջերից մեկի՝ Համբարձում Կարյանի «Գաղտնիք սիրահարաց կամ Արարատայ այցելուն» վեպի քննությանը: 19-րդ դարի 70-ականներին հրատարակված այս ուշագրավ ստեղծագործությունը, որն առանձնանում է ժամանակի գրական ընդհանուր հոսանքների ու ձևերի համապատկերում, ըստ արժանվույն չի ուսումնասիրվել և դիտարկվել է միայն արևմտահայ գրականության պատմության համատեքստում: Ըստ այդմ՝ այս հոդվածը նյութի քննության առաջին փորձն է: Որպես տեսական հենք կիրառվել են պատմահամեմատական և կառուցվածքային մեթոդները, շեշտը դրվել է միջտեքստայնության տեսության վրա՝ դրա լայն (Յու. Կրիստոնա) և նեղ (Ժ. Ժենետ) ընկալումներով: Առաջին գլխում դիտարկվել են տեքստի ու պարատեքստի հարաբերությունը, վեպում առկա ուղիղ մեջբերումները, այլուգիաները, հղումները հայ և համաշխարհային գրականությանը (Ռաֆայել Պատկանյան, Ժան դը Լաբրյուեր, Յոհան Կասպար Լաֆատեր, Ժակ Անրի Բեռնարդեն դը Սեն Պիեռ և այլք): Երկրորդ գլուխը հիպերտեքստ-հիպոտեքստ հարաբերության տրամաբանությամբ կենտրոնանում է վեպի և Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» աշխատության կապի վրա: Հ. Կարյանն իր ստեղծագործության կախարդական աշխարհը կառուցում է Խորենացու պատմության առանցքի վրա՝ դրա հենքով ստեղծելով այն բնակեցնող կերպարներին և անցյալի պատմական, քաղաքական, սոցիալական ու մշակութային շերտերը:

* Հոդվածն ընդունվել է տպագրության 12.04.2025 թ.:

Ուղարկվել է գրախոսության 20.06.2025 թ.:

Astghik Soghoyan
PhD in Philology
Institute of Literature after M. Abeghyan of NAS RA
Yerevan State University
ORCID ID: 0000-0002-0976-9954
Astghik.soghoyan1994@gmail.com

INTERTEXTUALITY IN HAMBARDZUM KARIAN'S NOVEL "THE SECRET OF LOVERS, OR VISITOR TO ARARAT"

Keywords: *Hambardzum Karian, intertextuality, paratext, hypertext, hypotext, Moses Khorenats'i.*

The article is dedicated to the analysis of one of the forgotten episodes of Western Armenian literature – the work of Hambardzum Karian, "*The Secret of the Lovers, or Visitor to Ararat*". The novel, published in the 1870s, represents an unusual phenomenon against the background of the literary trends of that period, but so far has not received due attention and has been studied primarily within the context of the Western Armenian literary tradition. Thus, this article represents the first attempt to analyze this material. As a theoretical foundation, the historical-comparative and structural methods were used, with particular emphasis on the theory of intertextuality – both in its broad (J. Kristeva) and narrow (G. Genette) understandings. The first chapter examines the relationship between text and paratext, direct quotations, allusions, and references to Armenian and world literature (Raphael Patkanyan, Jean de La Bruyère, Johann Kaspar Lavater, Jacques-Henri Bernardin de Saint-Pierre, and others). The second chapter, relying on the logic of the hypertext-hypotext relationship, focuses on the connection between the novel and Movses Khorenatsi's work "*History of Armenia*". Khorenatsi's history serves as the foundation for constructing the magical world of Karian's novel, within which the author fills the narrative both with character images and a multilayered reconstruction of the past – historical, political, social, and cultural.

Астгик Согоян
Кандидат филологических наук
Институт литературы им. М. Абегаи НАН РА
Ереванский государственный университет
ORCID ID: 0000-0002-0976-9954
Astghik.soghoyan1994@gmail.com

ИНТЕРТЕКСТУАЛЬНОСТЬ В РОМАНЕ АМБАРЦУМА КАРЯНА «ТАЙНА ВЛЮБЛЁННЫХ, ИЛИ ПОСЕТИТЕЛЬ АРАРАТА»

Ключевые слова: *Амбарцум Карян, интертекстуальность, паратекст, гипертекст, гипотекст, Мовсес Хоренаци.*

Статья посвящена анализу одного из забытых эпизодов западноармянской литературы – произведению Амбарцума Каряна «Тайна влюблённых, или посетитель Арарата». Роман, изданный в 1870-х годах, представляет собой необычное

явление на фоне литературных тенденций того периода, но до сих пор не получил должного внимания и изучался преимущественно в контексте западноармянской литературной традиции. Таким образом, данная статья представляет собой первую попытку анализа этого материала. В качестве теоретической основы использованы историко-сравнительный и структурный методы, особое внимание уделено теории интертекстуальности – как в её широком (Ю. Кристева), так и узком (Ж. Женетт) понимании. В первой главе рассматриваются взаимоотношения текста и паратекста, прямые цитаты, аллюзии и отсылки к армянской и мировой литературе (Рафаэл Патканян, Жан де Лабрюйер, Иоганн Каспар Лафатер, Жак-Анри Бернард де Сен-Пьер и др.). Вторая глава, опираясь на логику соотношения гипертекста и гипотекста, сосредоточена на связи романа с трудом Мовсеса Хоренаци «История Армении». История Хоренаци служит основой для построения волшебного мира А. Каряна, в рамках которого автор наполняет повествование как образами персонажей, так и многослойной реконструкцией прошлого – исторической, политической, социальной и культурной.

Ներածություն

Չնայած այն փաստին, որ միջտեքստայնություն եզրույթն առաջին անգամ կիրառվել է միայն 1967-ին ֆրանսիացի տեսաբան Յու. Կրիստևայի կողմից և առավելապես կապվում է հետմոդեռնիստական գրականության, ժամանակի տեսական մտքի ու գեղարվեստական գրականության զարգացման օրինաչափությունների հետ, տեքստերի միջև երկխոսությունների, մտքի փոխակերպումային անցումների և փոխադրումների օրինակներ առկա են դեռևս անտիկ գրականության էջերում (Քալանթարյան, 2016, 136): Ավելին, խոսելով միջտեքստայնության մասին՝ Կրիստևան նշում է, որ «Յուրաքանչյուր տեքստ իր կառույցով մեջբերումների խճանկար է, յուրաքանչյուր տեքստ մյուսի կլանումն ու կերպափոխումն է» (Kristeva, 1980: 66): Ուստի բոլոր տեքստերին այս կամ այն չափով բնորոշ է միջտեքստայնությունը (Բար, 1989: 424): Գեղարվեստական ստեղծագործությունների հեղինակներն ակամա կամ գիտակցված անդրադառնում են իրենց նախորդող կամ համաժամանակյա տեքստերին՝ կատարելով ուղղակի կամ անուղղակի, բացահայտ կամ քողարկված մեջբերումներ՝ խոսքի ռճավորման, պատմական հիշողության արթնացման և այլ նպատակներով (Քալանթարյան, 2016: 136):

Այս հոդվածում նույնպես փորձ է արվում միջտեքստայնության դիրքերից քննել 19-րդ դարի արևմտահայ վիպական արձակի ակունքներում կանգնած, բայց մոռացված գեղարվեստական մի ստեղծագործություն՝ *Համբարձում Կարյանի* (հավանաբար 1855-1915)¹ «Գաղտնիք սիրահա-

¹ Հ. Կարյանի մասին կենսագրական տվյալներ հայտնի չեն, չկան հիշատակումներ նաև նրա ծննդյան ու մահվան հստակ թվականների մասին: Աղբյուրների ուսումնասիրությունը, սակայն, պարզում է, որ վեպի հրատարակման ժամանակաշրջանում Պոլսում սովոր-

րաց կամ Արարատայ այցելուն» անավարտ ֆենթզի վեպը: Գործի առաջին երկու հատորները հրատարակվել են համապատասխանաբար 1871 ու 1872 թվականներին, և այն արևմտահայ վեպի ժանրի ձևավորման ու զարգացման ճանապարհի (60-ականների վերջ և 70-ականների սկիզբ) մի կարևոր բաղադրիչ է: Այդ շրջանի վիպագրությանն առհասարակ բնորոշ է միջտեքստայնությունը, ավելի ճիշտ՝ դրա բազային արտահայտություններից մեկը՝ *պարզ կրկնօրինակումը*:

Ժամանակի սիրված ու մեծ ոգևորությամբ ընթերցվող վեպերը (Հակոբ Հաճյանի «Հեղինե, կամ Գաղտնիք մը ի Կոստանդնուպոլիս» (1869), Նշան Միրայի «Դորա» (1871), Տաճատ Լյութֆյանի «Վրեժ» (1871) և Տիրան Փափազյանի «Խասկոյի քնաշրջիկը կամ սիրո գոհը» (1873)) գրված են ֆրանսիական գրականության ընդգծված ազդեցությամբ, դիպաշարային կաղապարների, կերպարակերտման ընդհանրացումների և թեմատիկ նմանությունների բացահայտ կրկնօրինակմամբ (Դանիելյան, 1964): Այս բնույթի գրականությանը, սակայն, պետք չէ բացասաբար վերաբերվել կամ համարել «գրագողություն»՝ բառի բուն իմաստով: Մա գրականության զարգացման բնական գործընթաց է, երբ ազգային գրականությունը ստեղծվում ու զարգանում է բարձր գրականության ստվերի ներքո, և ժամանակի ընթացքում պարզ կրկնօրինակումները փոխարինվում են յուրօրինակ երկերով: Ինչպես նշում է Հակոբ Հաճյանն իր «Հեղինե, կամ Գաղտնիք մը ի Կոստանդնուպոլիս» վեպի առաջաբանում. «Եվրոպացի վիպա-

րում էր Արևմտյան Հայաստանի Հավաք գյուղում ծնված ապագա ուսուցիչ, պատմաբան և գրող Համբարձում Կարյանը (1855-1915 թթ., որի մասին կենսագրական հատուկ նշանակություն ունեցող տվյալներ կան միայն համագյուղացիների հուշերում (Կատարիկեան, 1950: 12, Փափազեան, 1960: 219-217): Ըստ այդ հուշերի՝ Կարյանը սովորել է Պոլսի համալսարաններից մեկում, ավարտելուց հետո վերադարձել գյուղ, աշխատել որպես պատմության ուսուցիչ, կազմակերպել տեղի ինքնապաշտպանական մարտերը, հետագայում տեղափոխվել Պոլիս և սպանվել ցեղասպանության ժամանակ: Հուշերում շեշտվում է նաև, որ Կարյանը ստեղծագործել է երկերի անուններ կամ դիպաշարային մանրամասներ, սակայն, չեն հաղորդվում: Ոստի բավարար հիմքեր չկան քննվող վեպը հավավրելու ուսուցիչ Հ. Կարյանի գրչին վերագրելու համար, առավել ևս, որ վեպի հրատարակման տարիներին նա հազիվ 15-16 տարեկան լիներ: Հարց է ծագում. արդյո՞ք պատանին բավարար հմտություն, գեղարվեստական փորձ ու գուժար կունենար նմանօրինակ նկարագրող գիրքը հրատարակելու համար: Դժվար է ասել: Մյուս կողմից, սակայն, պատանեկան վառ երևակայությունը կարող էր և օգնել նրան հայացքն ուղղելու դեպի ժողովրդական հեքիաթներն ու լեգենդները և գրելու ժամանակի հայ գրականության համար ուշագրավ մանկական ստեղծագործություն: Այս թնջուկը հնարավոր կլինի բացել միայն կենսագրական նոր տվյալների առկայության պարագայում: Այժմ, սակայն, անվան նմանությունից բացի միակ ընդհանրությունը կապվում է Կարյանի ծննդավայրի՝ Հավաք գյուղի հիշատակման հետ: Վեպի տողատակում հեղինակը նշում է, որ մանկության տարիներին եղել է Հավաքին հարևան Բալու գյուղում և քաջածանոթ է տեղի բանահյուսությանն ու ավանդույթներին (Կարեան, 1871: 49):

սանութեանց թարգմանութիւնները տեսնելով փափաք մ'ունեցայ, մեր ազգին մէջ ալ վիպասանական երկասիրութեան մ'օրինակ ըլլալ: Բայց մեծ արգելք մը զիս շատ ժամանակ վարանման մէջ կը ձգէր, այն է՝ գրչիս տկարությունը: Այսու ամենայնիւ սրտիս ըղձին չէմ կրնար կենալ: *ՀԷՂԻՆԷ ԿԱՄ ԳԱՂՏՆԻՔ ՍԸ Ի ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ* անուն եռամեայ աշխատասիրութիւնս 'ի լոյս ընծայեցի, որուն վրիպակացը համար կանխաւ ընթերցողաց ներողամտութիւնը կը խնդրեմ. և հուսամ որ աւելի հմուտ գրիչներ ազգին բարոյականին յամար պատմութիւններ յօրինեն որոց համար ոչ նիւթ պակաս է և ոչ խրախոյս» (Հաճեան, 1869: 5): Վեպի բուն դիպաշարն սկսելուց առաջ, փաստորեն, հեղինակը նախապատրաստում է իր ընթերցողին՝ նախագգուշացնելով եվրոպական գրականության ազդեցության և վեպի ակնհայտ թերությունների մասին: Միննույն ժամանակ Հաճյանը նաև հույս է հայտնում, որ այդ գրական փորձերի հենքի վրա հետագայում կ'ձևավորվի ազգային մնայուն և արժեքավոր վիպագրություն:

Ահա գրական ազդեցությունների այսպիսի ժամանակաշրջանում է ծնվում Հ. Կարյանի «Գաղտնիք սիրահարաց կամ Արարատայ այցելուն» վեպը, որը հենվում է ոչ թե եվրոպական գրականության, այլ հայկական ժողովրդական բանահյուսության վրա (հեքիաթ, լեգենդ, ավանդագրույց, առասպել) և իր կառույցով ավելի մոտ է կանգնում նոր ձևավորվող անգլիական ֆենթեզի մանկագրությանը¹: Հայ գրականությունն այս վեպի մասին գրեթե լռում է: Այն հիշատակվում է միայն արևմտահայ վիպագրության պատմության համապատկերում՝ հպանցիկ դիտարկումներով (Դանիելյան, 1964: 638-641, Անանյան, 1992: 104-114, The Heritage of Armenian Literature, 2005: 91):

Սույն հոդվածի **հիմնախնդիրը** Հ. Կարյանի վեպի միջտեքստային արտահայտությունների քննությունն է, պատումի կառույցում նախորդող և ժամանակակից տեքստերի դիտարկումը, երկի հիմնական սյուժե ներթափանցման պատճառների, միջոցների ու նպատակների բացահայտումը, ինչպես նաև դրանց տեսակների և իմաստային ու ձևային փոխակերպումների ուսումնասիրումը: Աշխատանքը շարադրելիս միջտեքստայնությունը կիրառել ենք ինչպես **նեղ** (Ժ. Ժենետ), այնպես էլ **լայն** (Յու. Կրիստևա) ընկալումների համատեքստում՝ որպես **մեթոդական առանցք** առավելապես հենվելով Ժ. Ժենետի առաջարկած **տրանստեքստայնության** տեսության վրա:

¹ Լ. Քերոլի «Ալիսը հրաշքների աշխարհում» երկի հետ զուգահեռին և վեպի ֆանտաստիկական առանձնահատկություններին կանոնադաշտանք այլ ուսումնասիրության շրջանակում:

Պարատեքստ և միջտեքստայնություն

Տեքստի հարաբերությունն այլ տեքստերի հետ գրականության տեսաբան Ժ. Ժենետը անվանում է *տրանստեքստայնություն*¹՝ առաջարկելով այդ հարաբերությունների հինգ տեսակ՝ *պարատեքստայնություն, մետատեքստայնություն, արքետեքստայնություն, միջտեքստայնություն*² և *հիպերտեքստայնություն* (Женетт, 1998: 340-342, Շաշիկյան, 2017: 89-90): Ըստ տեսաբանի՝ հարաբերության այս տիպերը չեն գործում իրարից անջատ, առանց որևէ ներթափանցման: Ընդհակառակը, հաճախ դրանք միահյուսվում են ընդհանուր տրամաբանության մեջ և գործում միաժամանակ (Genette, 1997: 7):

Հ. Կարյանի «Գաղտնիք սիրահարաց կամ Արարատայ այցելուն» վեպում առկա են հեղինակին նախորդող և ժամանակակից ստեղծագործություններից տարաբնույթ միջտեքստային ներհյուսումներ: Չնայած հեղինակի մասին հայտնի կենսագրական հատուկենտ պատառիկներին և ինքնության հարցին՝ ելնելով միայն տեքստում առկա հիշատակումներից՝ վստահաբար կարելի է պնդել, որ Կարյանը քաջածանոթ է եղել հայ հին գրականությանը, իր ժամանակի արևելահայ և արևմտահայ հեղինակներին, ինչպես նաև համաշխարհային գեղարվեստական գլուխգործոցներին: Այդ տեքստերը տարբեր հարաբերություններով և հիշատակումներով ներկա են նրա վիպագրության էջերում և միջտեքստային ընթերցման հնարավորություն են ստեղծում:

Սկսենք *պարատեքստի*³: Վեպի հիմնական դիպաշարը բացվում է բնաբանով՝ վերցված ֆրանսիացի գրող Ժան դը Լաբրյուերի (1645-1696) աֆորիզմներից. «Գեղեցիկ դեմք մը ամեն տեսարանէ գեղեցիկ է. իսկ Սիրուհւոյ մը ձայնը ամենէն անուշ գեղգեղանքն է» (Կարեան, 1871: 15, Bruyère, 1885: 63):

Սկսելով այս բնաբանով՝ Կարյանը ընթերցողին նախապատրաստում է դիպաշարի հիմնական զարգացմանը և առաջին իսկ տողերից ստեղծում սիրային սյուժեի ընթերցման տրամադրություն: Նույն տրամաբա-

¹ Եթե Յու. Կրիստևան միջտեքստայնություն տերմինի տակ դիտարկում է տեքստերի համաներկայության բոլոր տիպերն ու տեսակները՝ դիտելով այն լայն համատեքստում, ապա Ժ. Ժենետը հասկացությունը նեղացնում է մինչև կոնկրետ տեքստային ներթափանցումներ՝ մի տեքստի ուղիղ ներկայությունը մյուս տեքստում բացահայտ (ուղիղ մեջբերում, գրագողություն) կամ քողարկված (անուղղակի մեջբերում /ռեֆերենց/, ակնարկում /ալյուզիա/) տարբերակներով: Ուսումնասիրության այս հատվածում միջտեքստայնությունը դիտում ենք Ժենետի առաջարկած նեղ սկզբունքով:

² Այսպես է Ժենետն անվանում տեքստի և պարատեքստի հարաբերությունը (հարակից տեքստեր՝ վերնագիր, ենթավերնագիր, բնաբան, նախաբան, տողատակի ծանոթագրություններ, լուսանցքային նշումներ, նկարագրողումներ և այլն):

նությամբ է նա ընտրում նաև վերնագրի առաջին հատվածը («Գաղտնիք սիրահարաց...»), որն ընթերցողին ակամա հուշում է սիրային-արկածային բովանդակություն: Ավելին, ակնհայտ է զուգահեռը Հաճյանի՝ վերը հիշատակված «Հեղինե, կամ Գաղտնիք մը ի Կոստանդնուպոլիս» վեպի վերնագրի հետ, որ, գրված լինելով ֆրանսիական սիրային գրականության ազդեցությամբ, ժամանակի ամենաընթերցվող ստեղծագործություններից էր:

Բնաբանի գաղափարաբովանդակային այս հենքի վրա էլ Կարյանը սկսում է իր դիպաշարը՝ անուղղակի հղում տալով ժողովրդական հեքիաթների կառուցվածքային-գործառության տրամաբանությանը: Գլխավոր հերոս Գնելի սիրած աղջկան՝ Շուշանին, գողացել են դները, և տղան, թողնելով ընտանիքն ու հարազատներին, հեռանում է տանից ու ընկնում սարեսար (հմմտ. հայ ժողովրդական հեքիաթների՝ «7 սարերի հետևում» արտահայտության հետ)՝ փնտրելու սիրելիին: Երկար տանջանքներից ու փորձություններից հետո նա անցնում է Արարատ լեռան քարանձավում բացված կախարդական անցուղով և ընկնում հրաշքների աշխարհը, որտեղ էլ գտնում է իր սիրելի Շուշանին: Սիրային վեպերի ու ժողովրդական հեքիաթների տրամաբանությունը հուշում է, որ դիպաշարային այս կետում աղջկա փրկության համար հերոսը պետք է կռվի գլխավոր հակահերոսի դեմ, հաղթի ու ամուսնանա կամ էլ իր մահկանացուն կնքի հանուն սիրո: Վեպի կեսից, սակայն, սիրային այս տրամադրությունները փոխվում են, և «գործող է դառնում» վերնագրի երկրորդ հատվածը՝ «...Արարատայ այցելուն»:

Հրաշքների աշխարհի կախարդական պարտեզում, որտեղ շուտով Գնելը պետք է հանդիպի Շուշանին, և թվում է՝ դիպաշարը կհանգչի իր երջանիկ հանգուցալուծմանը, եղեմական այգու նկարագրությունն ընդմիջվում է Ռ. Պատկանյանի «Օտար օրիորդ և պատանի» բանաստեղծության մի քառատողի ուղիղ մեջբերումով.

Ուր փայլում է արեգը իր կուսական շողերով,

Ուր ջըրում է երկինքը երկիրն զով ցողերով,

Ուր որ չի կա բորեաս, չիկա շիմուն ու խորշակ,

Օդը շունչ է հրեշտակի, ջուրը մեղր է անուշակ... (Կարեան, 1871: 56, Պատկանյան, 1963: 84):

Հաջորդիվ այգի է գալիս Շուշանը և խոստովանում, որ չի սիրում Գնելին ու չի ուզում նրա հետ Կոստանդնուպոլիս վերադառնալ: Ավելին, պարզվում է, որ աղջիկը, որի սիրո համար երիտասարդը թողել էր ամեն ինչ ու հասել հեռավոր աշխարհներ, իրականում մարդ չէ, այլ կերպարանափոխված քաջ: Հիասթափված այս բացահայտումից՝ Գնելը վճռում է

մոռանալ իր զգացմունքներն ու փոխարենը կյանքը նվիրել հայրենիքի ազատագրման գործին:

Այս համատեքստում Ռ. Պատկանյանից մեջբերումը խորհրդանշական գործառույթ է ստանում: Այն նախապատրաստում է ընթերցողին սյուժետային գծի փոփոխության տրամաբանությանը՝ սիրայինից անցում ազգային-հայրենասիրական թեմատիկային: Ճիշտ է, մեջբերված քառատողում արտահայտված է միայն Հայաստանի բնության գեղեցկության գովերգումը, բայց բանաստեղծությունն իր ամբողջության մեջ, որին հղում է հեղինակը, ներկայացնում է օտարուհի աղջկա ու հայ երիտասարդի երկխոսությունը: Աղջիկը փորձում է շեղել նրան կյանքի գույներով, գինով ու սիրով, բայց տղայի սրտում վառ է միայն սերը դեպի իր տառապյալ հայրենիքը: Եվ ինչպես Պատկանյանի քնարական հերոսը, Կարյանի Գնեւը նույնպես ընտրություն է կատարում սիրած աղջկա ու տառապող հայրենիքի փրկության միջև:

«Գաղտնիք սիրահարաց կամ Արարատայ այցելուն» վեպի բուն տեքստում, փաստորեն, գաղափարական առումով հակադրվում են ն՝ վերնագրի երկու մասերը, ն՝ միջտեքստային երկու ուղիղ մեջբերումները՝ Ժան դը Լաբրյուերի բնաբանն ու Ռաֆայել Պատկանյանի քառատողը:

Քննվող վեպն ուղիղ մեջբերումներից բացի հարուստ է նաև **այլուգիաներով**¹, որոնց միջոցով Կարյանն ընթերցողին ակնարկում է տարբեր հեղինակների կամ նրանց կոնկրետ ստեղծագործությունների մասին: Իր գրելու հակիրճ նկարագրական ոճը բնութագրելիս, օրինակ, այն հակադրում է շվեյցարացի բանաստեղծ, փիլիսոփա Յոհան Կասպար Լաֆատերի (1741-1801) գրելաոճին, կամ Գնեւի ու Շուշանի սերն ու տառապանքները զուգահեռում է ֆրանսիացի գրող Ժակ Անրի Բեռնարդեն դը Սեն Պիեռի (1737-1814) «Պողոս և Վերգիլին» (Սեն-Փիեր, 1856) ստեղծագործության հերոսների դժբախտ ճակատագրին՝ առանց հեղինակի անունը հիշատակելու. «Վիրգիլեան յիշեցի, նաև երեւակայեցի Պողոս մը որ մահն աչք առած իր սիրուհին ծովին կատաղի ալիքներէն ազատելու համար դիւցազնաբար կը լողար» (Կարեան, 1872: 2):


Կարյանի վեպում ուղղակի մեջբերումներ և ակնարկումներ կան նաև հայ ու համաշխարհային գրականության այլ հեղինակների ստեղծագործություններից՝ Հայր Կոմիտաս Արսեն Բագրատունի, Միքայել Նալբանդյան, Կիկերոն և այլն: Ուշարժան են նաև միջտեքստային աղերսները հայ

¹ Նեղ ընկալմամբ՝ միջտեքստայնության տեսակներից է նաև **ակնարկումը (այլուգիա)**, որի միջոցով հեղինակն ընթերցողին ակնարկում է մեկ այլ գեղարվեստական ստեղծագործություն, բանահյուսական սյուժե, հասարակական կարծիք կամ որևէ ընդունված սովորություն (Пьер-Гро, 2008: 37):

ժողովրդական բանահյուսության հետ, որոնց մի մասն ամենայն հավանականությամբ հեղինակն ինքն է լսել: Գրերի գյուտի մասին խոսելիս, օրինակ, Գնելը մեջբերում է տառերի՝ Բալու լեռան քարանձավում հայտնվելու ավանդազրույցը (Դերիկյան, 2005), իսկ տողատակում Կարյանը նշում է, որ այդ պատմությունն իրեն պատմել են տեղացիները 1864-ին Բալու կատարած այցելության ժամանակ (Կարեան, 1871: 49):

Այս դիտանկյունից կարևոր են նաև բանահյուսական տարբեր կերպարների հիշատակումները (մենե աղեկներ, Կադ դև, քաջքեր, հավերժահարսեր, վիուկներ, ոգիներ և այլն), որոնց կերպարակերտման ժամանակ անգամ հեղինակը հղում է տալիս բանահյուսությանը. «Երբ այդ հրեշներն աչացս երևցան, իրենց անճոռնի դէմքը, գլխներուն վրայի երկերկու եղջիրներն **պատաւներու նկարագրած** մենե աղեկներէն չէի կրնար տարբերել. իսկ ոտքերուն և ձեռաց ճանկերնուն դիրքը երբ տեսայ, **Հնդկաց պրահմանները** միտքս եկան...» (Կարեան, 1871: 33, ընդգծումները մերն են. – Ա.Ս.):

Խորենացու պատմությունը՝ վեպի հիպոտեքստ



Պատկեր 1. Միջտեքստայնության առանցքը

Հարուստ միջտեքստային ներկայություն ունենալուց բացի՝ դիտարկվող վեպն առանձնանում է նաև Մ. Խորենացու «Հայոց պատմության» հետ հիպերտեքստ-հիպոտեքստ յուրօրինակ հարաբերությամբ¹. Կարյանի «Գաղտնիք սիրահարաց կամ Արարատայ այցելուն» վեպի պատումի աշխարհը կառուցված է Խորենացու ստեղծագործության վրա:

Ըստ Յու. Կրիստևայի միջտեքստայնության տեսության (լայն ընկալում)² միջտեքստայ-

նության գաղափարը հենվում է ուղղահայաց և հորիզոնական առանցքների վրա (Kristeva, 1980: 66): Հորիզոնական առանցքը ներկայացնում է հե-

¹ Բ տեքստի (հիպերտեքստի) հարաբերությունն իր նախատեքստի՝ Ա տեքստի (հիպոտեքստի) հետ, որի կերպափոխման, ձևափոխման արդյունքում էլ ծնվել է քննվող տեքստը: Այդ կերպափոխումն, ի դեպ, կարող է լինել ուղղակի կամ անուղղակի (Женетт, 1998: 340-342):

դինակ-ընթերցող հարաբերությունը, իսկ ուղղահայացը՝ տեքստ-համատեքստ կապը (տե՛ս. պատկեր 1.): Ըստ այդմ՝ յուրաքանչյուր տեքստ մի կողմից ներկայացնում է միջտեքստային կապը հեղինակի և ընթերցողի միջև, երբ յուրաքանչյուր ընթերցման հետ այն կերպափոխվում է, հարաբերվում այլ կողերի և ընկալումների հետ (Բար, 1989: 424), մյուս կողմից՝ կապվում իրեն նախորդող, ժամանակակից և հաջորդող տեքստերին: Ըստ այս տրամաբանության՝ հեղինակը նախ և առաջ ընթերցող է և հետո միայն «սեփական տեքստեր ստեղծող» (Միսակյան, 2022: 303):

Ինչպես «Գաղտնիք սիրահարաց կամ Արարատայ այցելուն» վեպի հեղինակը, այնպես էլ հերոս Գնեկն առաջին հերթին Խորենացու ընթերցողներն են, իսկ պատմահոր պատմությունը՝ վեպի հիպոտեքստը: Անցնելով Արարատի անձավի անցուղով՝ Գնեկը հայտնվում է կախարդանքների աշխարհում՝ մեկ այլ պատմական, քաղաքական և ֆիզիկական իրականության մեջ, որտեղ մի կողմից հանդիպում է առասպելական ու հեքիաթային արարածների (Արտավազդ արքա, ոգիներ, քաջքեր, հավերժահարսեր, մենե աղեկներ, սատանաներ և այլն), ապրում՝ հետևելով կախարդանքի կանոններին, իսկ մյուս կողմից՝ հանդիպադրվում սառած պատմական ժամանակին՝ Արտավազդ արքայի գահակալության տարիներին: Երիտասարդի առջև դրվում է մի բարդ խնդիր՝ գործել անցյալի պատմական ժամանակի օրենքներին համապատասխան, չմատնել, որ ինքը 1861 թվականի Պոլսից է, չբացահայտել իրականությունը և ներկայանալ որպես Արտավազդի եղբորորդի՝ արքայազն Գնեկ: Ստեղծված միջավայրում հերոսը փորձում է գտնել իրեն ծանոթ հուշումներ, որոշակի կապեր իր ունեցած գիտելիքների հետ, և այս կետում նրան օգնության է գալիս դեռևս դպրոցական տարիներին լավ սերտած «Հայոց պատմությունը»: Գնեկը, փաստորեն, վեպում կերպավորվում է որպես ընթերցող, որը միջտեքստային գիտելիքների շնորհիվ հյուսում է իր պատումը:

Նախ՝ նա կրկնօրինակում է Խորենացու ոսկեդենիկ գրաբար լեզուն ու ռճը՝ փորձելով չտարբերվել տեղի միջավայրից:

«Այսպես կըխօսէր տարաբաղդ թագաւորը, ինքզինքը Արտաշատայ մէջ կարծելով, իր ձայնը կընմանէր առիւծի ձայնի և այս խօսքերը գրուցած ատեն լերան վրայի քարերը կը դղրդէին, չըսեմ իր խօսած լեզուին քաղցրութիւնը, որուն բոլոր բառերն ալ հին Հայերէն էին, գիտեմ, եթէ իմ սիրելի մայրս զիս կարդալ սորուելու չըխրկէր, անոր խոսուածքին բառ մը անգամ չպիտի կրնայի հասկնալ <...> սաչափ գիտեմ, որ մեր ծերունի պատմիչին (Խօրենացիին) մեզի աւանդած քանի մը հատակտոր շէրերուն շատ նմանութիւն ունէր, թէն ալևոր պատմաբանին զանոնք կոկած ըլլալն ալ նշմարեցի» (Կարեան, 1871: 41-42):

Խորենացու պատմությունից քաղած գիտելիքների հիման վրա է հետոսը խոսում նաև *պատմական փաստերի* մասին (Տիգրան Մեծ, Արտաշես արքա, Արտավազդի եղբայր Տիրան թագավոր, թագավորական ներքնատանեկան հարաբերություններ, ճակատամարտեր, օտար թագավորությունների հետ խնամիական հարաբերություններ և այլն), քննարկում դրանք Արտավազդ արքայի հետ:

Գնելը նաև *պատմական իրականության միջավայրում* է փորձում իրեն ծանոթ առարկաներ, երևույթներ կամ խոսքեր գտնել՝ նորից հենվելով «Հայոց պատմության» վրա: Նրան ծանոթ է Մար Աբաս Կատինայի աշխատությունը, որ ընթերցում է թագավորը, լսել է Արտավազդ Երկրորդ արքայի դրամաների մասին, որ ցուցադրվում են կախարդական աշխարհի թատրոնում, ծանոթ է Գողթան երգիչների երգերին, որ երգվում են նույն թատրոնում, կարդացել է հայ հեթանոսական աստվածների մասին, որոնց պաշտում է Արտավազդը, հասկանում է իր շատակերության մասին ասված՝ «Այս մարդը Շարային ցեղին ըլլալու է» (Կարեան, 1871: 68) հումորի ենթատեքստը և այլն:

Խորենացու տեքստի ընթերցումն ու դրան քաջածանոթ լինելը, սակայն, որոշ հատվածներում նաև խանգարում են հերոսին հարաբերվելու կախարդական աշխարհի պատմական իրականությանը, և նա հանդիպադրվում է **փաստի թերի ներկայացմանը, իրականության խեղաթյուրմանն ու թերասացությանը:**

Արքայի հետ գրույցներում Գնելը պնդում է, որ հայոց այբուբենը ստեղծել է Մեսրոպ Մաշտոցը՝ այն տեսնելով երագում: Արտավազդը, սակայն, ցույց է տալիս գրերի վաղնջական օրինակներ և ապացուցում հակառակը:

«Ո՞վ գտած է Հայոց գիրերն, ըսաւ քմծիծաղով մը:

– Մեսրոպ անուն մարդը մը:

– Մեսրոպ անունով մարդը մը, – ըսաւ զարմացմամբ, ոտքերն ալ ուժգին գետնին զարնելով,– միամիտ Գնել, քեզ ասանկ համոզել են...

– Համոզել ի՞նչ ըսել է, ահա բոլոր պատմագիրք կը վկայեն <...>:

– Խեղճ տղայ, ըսաւ հօրեղբայրս ձեռքը ուսիս վրայ դնելով, Հայ գիրերն արդէն Հայկազանց ժամանակէն ի վեր կային, և մեր նախնիք օրէ օր կոկելով բաւական ձևի բերած էին. Բայց յետոյ մեր նախորդներէն մէկ քանի օտարամոլութեամբ ձգեցին մեր տառերն, ու սկսան յոյն, ասորի և պարսիկ գիրերն գործածել, որ գէշ բան մնէր» (Կարեան, 1871: 50-51):

Վեպում այլ բնութագրումներով են նկարագրվում նաև Աժդահակի երագին հաջորդող դեպքերը: «Երբեմն երագներն ալ իրականութեան կը

փոխուին, Մոկացի¹: Եթե քու կրոնքդ չստիպեր Մարիբաս Կատինացիի գրած հայկական պատմութիւնը ուրանալու, զայն թղթատելով պիտի տեսնես Տիգրան մը որ իր խորթ փեսային թոքը իր շամփրենման նիզակաւ աղիքներուն հետ դուրս թափելով, իրակացոյց այն երազին մեջ տեսնուած դիւցազնը՝ որ Վագրի մը վրայ հեծած, Մարաց ինքնակալութեան վրայ կը յարձակէր» (Կարեան, 1872: 184-185):

Ըստ Արտավազդի դատողությունների՝ Խորենացին այս պատմությունը վերցրել է Մար Աբաս Կատինայի աշխատությունից, բայց փոփոխության ենթարկել՝ թուլացնելով դաժան հաշվեհարդարի ու սպանության գույները, որոնք տարբերվում են պատմահոր աշխատության ընդհանուր ոճից և առավել բնորոշ են Հովհան Մամիկոնյանի «Տարոնի պատմությանը» (Մամիկոնյան, 1989):

Վեպի դիպաշարում պատմության աղճատված ներկայացման ամենավառ օրինակը, սակայն, կապվում է Արտավազդ արքայի կերպարին: Կարդացած լինելով Խորենացու ավանդած առասպելական պատմություններն Արտավազդի, նրա անեծքի և աշխարհը կործանելու չարագույժ մարգարեության մասին՝ Գնելը սարսափով է մոտենում ստորգետնյա աշխարհի արքային, վախենում նրանից: Ժամանակի ընթացքում, սակայն, Արտավազդը պատմում է իր հերոսական անցյալի, հայրենիքի համար վարած ճակատամարտերի, տարած հաղթանակների և անուրանալի հայրենասիրության մասին, ինչից հետո երիտասարդը եզրակացնում է. «Քու անահ հոգիդ նշմարելով, Վեհափառ տէր, կ'սկսիմ **Խորենացիին պատմութեան վրայ տարակուսիլ**» (Կարեան, 1872: 185, ընդգծումը մերն է – Ա.Ս.):

Միջնադարյան գրականությունից դեպի «Գաղտնիք սիրահարաց կամ Արարատայ այցելուն» վեպ **հիպոտեքստ-հիպերտեքստ** յուրօրինակ անցումային արտահայտություններ են դառնում նաև խոսքի ոճավորման, միջակային տրամադրության ստեղծման ու ընթերցողի աչքին ծանոթ պատմության հետ կապի շեշտադրման նպատակով արվող չափածո մեջբերումներն ու դրանց հիման վրա գրված հատվածները: Օրինակ՝ գտնվելով դրախտային այգում և հիանալով տեղի չնաշխարհիկ գեղեցկությամբ, բլրվների երգով ու հավերժահարսերի պարով՝ Գնելը, միևնույն է, կարոտում է իր հայրենիքը և կարոտն արտահայտում՝ կրկնելով Արտաշես արքայի բառերը. «Մեր նախնեաց պէս կը գոչեմ, «Ո՛ տայր ինձ... զառաւօտն նաւասարդի»» (Կարեան, 1871: 70):

Կամ՝ երկրորդ հատորի վերջում, երբ Արտավազդը, իմանալով իր հայրենիքի դժբախտ ճակատագրի մասին, որոշում է փախչել ստորգետն-

¹ Գնելի իրական ես-ի բացահայտումից հետո Արտավազդն սկսում է նրան Մոկացի կոչել:

յա թագավորությունից ու փրկել Հայաստանը, քաջքերը շրջապատում են նրան ու սկսում քրքջալով կրկնել հայրական անեծքի խոսքերը. «Կարծես թե բոլոր լեռները, բլուրները, ծառերն ու հողերը անգամ լեզու էին առեր, և կը գոչէին, Անդ կասցես ու գլոյս մի տեսցես (Խորենացի, 1990: 125): Այս ձայները տակավին վերջ չէին առած, երբ տեսայ որ յանկարծ ահագին շղթայ մը կենդանի էակի մը պէս եկաւ, և պլլուեցաւ թշուառ ծերունւոյն ոտքերուն» (Կարեան, 1872: 220): Պատկերն ավելի է սրվում անեծքի կրկնության, դարբինների մուրճերի աղմուկի, քաջքերի ոտքերի տրոփ-յունների ձայնային կրկնությամբ և Խորենացու չափածոյի համաբանությամբ գրված տողերով, որոնցով էլ ավարտվում է վեպի՝ մեզ հասած վերջին հատորը.

Դարբնաց դոփին,
Քաջաց տրոփին,
Միշտ անդ կացցես,
Լոյս չը տեսնես,
Կը որոտան,
Գըլխուս վըրան (Կարեան, 1872: 220):

Եզրակացություն

Այսպիսով՝ Հ. Կարյանի «Գաղտնիք սիրահարաց կամ Արարատայ այցելուն» անավարտ և մոռացված ֆենթզի վեպը հարուստ է միջտեքստայնության տարաբնույթ արտահայտություններով: Դրանում միահյուսվում են նախորդ և ժամանակակից հեղինակների գործերից հատվածներ: Տեքստը մի կողմից ներառում է այլ տեքստեր (բնաբան, ուղղակի և անուղղակի մեջբերումներ) և հղում տարբեր ակնարկումների (այլուզիաներ), մյուս կողմից՝ այն հիպոտեքստ-հիպերտեքստ կապի տրամաբանությամբ հենված է Խորենացու պատմության առանցքի վրա:

Վեպի կախարդական աշխարհում քարացած ժամանակ է, որի պատմական, քաղաքական և մշակութային շերտերը հղում են Պատմահոր աշխատությանը: Այս հարաբերությունը, սակայն, սոսկ գեղարվեստական մշակում կամ պատմավեպի շարադրում չէ, այլ մեկ այլ (կախարդական) աշխարհի ստեղծում, որի համապատկերում Խորենացին նույնպես ինչ-որ առումով կերպավորվում է իբրև գործող անձ: Ըստ այդ իրականության տրամաբանության՝ նա շարադրում է իր տեքստը երեք մոտեցմամբ՝ (1.) նույնությամբ ներկայացնելով իրականությունը, (2.) խմբագրելով այն ու կատարելով որոշակի փոփոխություններ և (3.) ամբողջությամբ կերպավորելով: Եվ այս երեք մոտեցումներն էլ, հարաբերվելով վեպի պատումի

համապատկերում, կերպարի համար ստեղծում են իրականության ընկալման պարադոքս:

Հաշվի առնելով վերոգրյալ խնդիրները՝ կարծում ենք, որ «Գաղտնիք սիրահարաց կամ Արարատայ այցելուն» վեպը հայ գրականության հետաքրքիր օրինակներից է: Ճիշտ է, այն ունի բազմաթիվ թերություններ, դիպաշարային տարբեր դրվագները գեղարվեստականորեն համոզիչ չեն, նկարագրություններն անտեղի շատ են, գործողությունները՝ քիչ, երևում է, որ հեղինակն անփորձ է, հավանաբար՝ սկսնակ, և տեքստը հետագա գեղարվեստական մշակման ու խմբագրման չի ենթարկվել: Ֆենթզի աշխարհի ստեղծման յուրահատկությունը, ժողովրդական հեքիաթների, լեգենդների ու առասպելների մշակման ձևը և միջտեքստայնության կիրառման ուշարժան օրինակները, սակայն, հիմք են տալիս եզրակացնելու, որ վեպը թերագնահատված է և հարկ կա այն վերաբժնորելու նոր հայացքով ու ժամանակակից տեսական գործիքակազմով:

Գրականության ցանկ

1. **Անանյան Ն.**, Արևմտահայ վիպագրություն, Երևան, ԳԱԱ հրատ. 1992, 340 էջ:
2. **Դանիելյան Կ.**, Այլ արձակագիրներ, Հայ նոր գրականության պատմություն, հ. 3, Երևան, ՀՍՍՌ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հրատ., 1964, 757 էջ:
3. **Դերիկյան Վ.**, Գրերի գյուտի Բալուի ավանդությունը, *Էջմիածին*, 2005 (10-11), էջ 118-129:
4. **Կատարիկեան Պ.**, Մարած ճրագներ (Հաւաւ գիւղին եղեռնը), Նիւ Եորք, տպ. Կոչնակ, 1950, 136 էջ:
5. **Կարեան Հ.**, Գաղտնիք սիրահարաց կամ Արարատայ այցելուն, հ.1, Կ. Պօլիս, տպ. Թ. Տիֆիտճեան, 1871, 112 էջ
6. **Կարեան Հ.**, Գաղտնիք սիրահարաց կամ Արարատայ այցելուն, հ.2, Կ. Պօլիս, տպ. Թ. Տիֆիտճեան, 1872, 113-210 էջ:
7. **Հաճեան Հ.**, Հեղինէ կամ գաղտնիք մը ի Կոստանդնուպօլիս, հ.1, Կ. Պօլիս, տպ. Ռ.Յ. Քիրքճեան, 1869, 201 էջ:
8. **Մամիկոնյան Հ.**, Տարոնի պատմություն, Երևան, Խորհրդային գրող, 1989, 176 էջ:
9. **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն, Երևան, Հայաստան, 1990, 321 էջ:
10. **Շաշիկյան Գ.**, Ժանրի ձևափոխման խնդիրը Ադասի Այվազյանի «Օբյեկտիվ-18» գրքում, *«Վէմ» համահայկական հանդես*, 2017, 3(59), էջ 89-96:
11. **Պատկանյան Ռ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. 1, Երևան, Հայկական ՍՍՌ ԳԱ հրատ., 1963, 344 էջ:
12. **Սէն-Փիէր Պ.**, Պոլ եւ Վիրգինէ, Փարիզ, Գրանոց Ճ. Արամեան, 1856, 285 էջ:

13. **Միսակյան Ղ.** Միջտեքստայնություն. եզրույթի ծագումն ու զարգացման փուլերը, *Բանբեր Վ. Բոյունովի անվան պետական համալսարանի, Լեզվաբանություն և բանասիրություն*, 2022, 1(60), էջ 291-307:
14. **Փափազեան Տ.**, Պատմություն Բալու Հաւաւ գիւղի, Պէյրութ, տպ. Մշակ, 1960, 240 էջ:
15. **Քալանթարյան Ժ.**, Միջտեքստայնություն, Գրականության տեսության արդի խնդիրներ, 2016, Երևան, ԵՊՀ հրատ, էջ 136-153:
16. **Барт Р.**, Избранные работы: Семиотика: Поэтика, Москва, Прогресс, 1989, 617 с.
17. **Пьерс-Гро Н.**, Введение в теорию имтертекстуальности, Москва, Издательство ЛКИ, 2008, 240 с.
18. **Женетт Ж.**, Работы по поэтике: Фигуры. том 1-2, Москва, изд.-во им. Сабашниковых, 1998, 472 с.
19. **Bruyère J.**, Characters, London: John C. Nimmo publ., 1885, 494p.
20. **Genette G.**, Palimpsests, Literature in the Second Degree, Nebraska, U of Nebraska Press, 1997, 490 p.
21. **Kristeva J.**, Desire in language: a semiotic approach to literature and art, Oxford, Blackwell, 1980, 305 p.
22. The Heritage of Armenian Literature, vol. 3 (ed. H. Hachikyan et al.), Detroit, Wayne State University Press. 2005, 388 p.

References

1. **Ananyan N.**, Arevmtahay vipagrut'yun [The Western Armenian Novel], Yerevan, NAS publ., 340 p. (in Armenian).
2. **Barthes, R.**, Izbrannye raboty: Semiotika. Poetika [Selected Works: Semiotics. Poetics]. Moscow, Progress, 1989, 617 p. (in Russian).
3. **Bruyère J.**, Characters, London: John C. Nimmo publ., 1885, 494 p.
4. **Danielyan K.**, Ayl novelistner [Other novelists], Hay nor grakanut'yan patmut'yun [The history of the Modern Armenian Literature], Yerevan, Institute of Literature after M. Abeghyan of NAS of Armenian SSR Publ., 1964. 757p. (in Armenian).
5. **Devrikyan V.**, Greri gyuti Balui avandut'yuny [The Balu Legend of the Invention of the Alphabet], *Etchmiadzin*, 2005 (10-11), pp. 118-129. (in Armenian).
6. **Genette G.**, Figury [Figures], vol. 1-2, Moscow, publ. named after Sabashnikovs, 1998, 472 p. (in Russian).
7. **Genette G.**, Palimpsests, Literature in the Second Degree, Nebraska, U of Nebraska Press, 1997, 490 p.
8. **Hachian H.** Heghine kam gaghtnikh my i Kostandnupolis [Heghine or the Secret in Constantinople], vol.1, Constantinople, Publishing house Kurkčian, 1869, 201 p. (in Armenian)
9. **Kalantaryan Zh.**, Mijtekhstaynut'yun [Intertextuality], Grakanut'yan tesut'yan ardi khndirner [Contemporary Issues in Literary Theory], 2016, Yerevan YSU Publ., 136-153 pp. (in Armenian).
10. **Karian H.**, Gaghtnikh siraharats kam Araratay ayts'elun [The Secret of Lovers, or Visitor to Ararat], vol. 1, Constantinople, T. Tifittchian publ., 1871, 112 p. (in Armenian).

11. **Karian H.**, Gaghtnikh siraharats kam Araratay ayts'elun [The Secret of Lovers, or Visitor to Ararat], vol. 2, Constantinople, T. Tifitchian publ., 1872, 113-210 pp. (in Armenian).
12. **Katarikian P.**, Marats' tchragner (Havav gyughin yegherny) [The extinguished lights (The Genocide of the Village Havav)], New York, Pub. house "Kochnak", 1950, 136 p. (in Armenian).
13. **Kristeva J.**, Desire in language : a semiotic approach to literature and art, Oxford, Blackwell, 1980, 305 p.
14. **Mamikonyan H.**, Taroni patmut'yuny [The history of Taron], Yerevan, Khorhrdayin grogh, 1989, 176 p. (in Armenian).
15. **Moses Khorenats'i**, Hayots patmut'yun [The History of the Armenians], Yerevan, Hayastan Publ., 321 p. (in Armenian).
16. **Papazian T.**, Parmut'yun Balu Havav gyughi [The history of Palu Havav village], Lebanon, The publishing house "Mshak", 1860, 240 p. (in Armenian).
17. **Patkanyan R.**, Yerkeri liakatar zhoghovatsu [Complete Collection of Works], vol. 1, Yerevan, publ. of the AS of Armenian SSR, 1963, 344 p. (in Armenian).
18. **Piégay-Gros N.**, Vvedenie v teoriyu intertekstual'nosti [Introduction to the Theory of Intertextuality], Moscow, LKI Publishing, 2008, 240 p. (in Russian).
19. **Saint-Pierre B.**, Pol yev Vergine [Paul and Virginie], Paris, E. Aramian Publ. 285 p. (in Armenian).
20. **Shashikyan G.**, Zhanri dzevavorman khndiry Aghasi Ayvazyani "Obyektiv-18" grkhum [The Problem of Genre Transformation in Aghasi Ayvazyani's «Objective-18» Book], *"Vem" Pan-Armenian journal*, 2017, 3(59), pp. 89-96. (in Armenian).
21. **Sisakyan D.**, Mij'tekhstaynut'yun: Yezruyt'i ts'agumn u zargatsman p'ulery [Intertextuality: Origins and Evolution of the Term], *Bulletin of Brusov State University, Linguistics and Philology*, 2022, 1(60), 291-307 p. (in Armenian).
22. The Heritage of Armenian Literature, vol. 3 (ed. H. Hachikyan et al.), Detroit, Wayne State University Press. 2005, 388 p.

Աստղիկ Սողոյան – բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտաշխատող և ԵՊՀ դասախոս: Գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ 19-րդ դարի հայ գրականություն, հայ մանկագրություն, գրական կապեր, գրականության տեսություն: Հեղինակ է 29 գիտական հոդվածների և երկու մենագրության:

ORCID ID: 0000-0002-0976-9954
astriksoroyan@litinst.sci.am

Astghik Soghoyan – PhD in Philology, Researcher at the Institute of Literature after Manuk Abeghyan of NAS of RA and lecturer at YSU. Scientific interests: Armenian Literature of 19th century, Children's literature, Literary Connections, Literary theory. Author of 29 articles and two monographs.

ORCID ID: 0000-0002-0976-9954
astriksoroyan@litinst.sci.am

***Астгик Согоян** – кандидат филологических наук, Институт литературы им. Манука Абеяна НАН РА и преподаватель ЕГУ. Научные интересы: армянская литература XIX века, детская литература, литературные связи, теория литературы. Автор 29 статей и 2 монографий.*

ORCID ID: 0000-0002-0976-9954

astriksoroyan@litinst.sci.am